



ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

Ընդունվել է ԵՊԲՀ գիտական խորհրդի

31.10.2012 թվականի թիվ 04 նիստի որոշմամբ,

հաստատվել է ԵՊԲՀ ռեկտորի 01.11.2012 թվականի

թիվ 107 Մ-3 հրամանով

Ռեկտորի պաշտոնակատար Ս.Ա. Ավետիսյան

1. Համալսարանի բանավոր քննությունների նպատակն է պարզել ուսանողների մասնագիտական գիտելիքների համապատասխանությունը տվյալ առարկայի ծրագրային պահանջներին:

2. Բանավոր քննությունն անցկացնելու նպատակով ռեկտորի հրամանով սահմանվում է քննությունների ժամանակացույց:

3. Բանավոր քննությունների հարցաշարերը կազմվում են մասնագիտական ամբիոնների կողմից՝ առարկայական ծրագրերին համապատասխան, որոնք հաստատվում են ֆակուլտետների գիտական խորհուրդների կողմից և համապատասխան ամբիոնները քննաշրջանից մեկ ամիս առաջ դրանք տրամադրում են ուսանողներին:

4. Բանավոր քննություններն անց են կացվում տոմսերով, որոնք պարունակում են երեք հարց:

5. Բանավոր քննությունների տոմսերը կազմվում են մասնագիտական ամբիոնների կողմից՝ քննական հարցաշարերին համապատասխան, որոնք հաստատվում են ֆակուլտետների գիտական խորհուրդների կողմից:

6. Տոմսերում հարցերի բաշխումն ըստ թեմաների որոշվում է՝ ելնելով տվյալ առարկայի ուսումնական ծրագրում դրանց մասնաբաժնից:

7. Բանավոր քննությունից անբավարար ստացած ուսանողին տրվում է վերահանձնելու երկու հնարավորություն:

8. Բանավոր քննությանը չմասնակցած ուսանողն իր կարգավիճակով նույնացվում է անբավարար ստացած ուսանողին: Նման ուսանողն իրավունք ունի բանավոր քննությունը հանձնել մարման շրջաններում:

9. Բանավոր քննությունն ընդունում են ամբիոնի վարիչը և երկու փորձառու դասախոս, առնվազն երկու քննական կետերում: Վիճահարույց դեպքերում վերջնական որոշումն ամբիոնի վարիչինն է:

10. Բանավոր քննության ժամանակ ուսանողն իրավունք ունի քննական տոմս վերցնել մեկ անգամ (այն փոխել չի թույլատրվում):

11. Քննող դասախոսի կողմից լրացուցիչ հարցերը տոմսում գետեղված հարցերի շրջանակներում պետք է լինեն:

12. Քննող դասախոսի գործառույթներն են՝

ա) Առարկայի ծրագրի պահանջներին ուսանողի գիտելիքների համապատասխանության ստուգումը,

բ) Բանավոր քննության գնահատականի որոշումը:

13. Քննող դասախոսը ուսանողի գիտելիքները գնահատում է 10 թվանշանին համակարգով և գնահատականը հայտնում նրան: Վերջնական գնահատականը ձևավորվում է տարեկան և քննական գնահատականների միջին թվաբանականով: Ստացված նիշն ամբողջացվում է: Անբավարար քննական գնահատականի դեպքում միջինացում չի կատարվում: Այն ընդունվում է որպես վերջնական գնահատական:

14. Քննական տեղեկագրում և ստուգման գրքույկում նշվում է ուսանողի վերջնական գնահատականը:

15. Բանավոր քննություններն անցկացվում են ընթացակարգային հետևյալ պահանջների համաձայն՝

ա) Քննական տոմսը ստանալուց հետո բանավոր քննությանը նախապատրաստվելու համար յուրաքանչյուր ուսանողին տրվում է մինչև 20 րոպե,

բ) Ուսանողին քննելու համար տրվում է մինչև 20 րոպե,

գ) Քննության տևողությունն օրվա ընթացքում չպետք է գերազանցի 8 ժամը:

16. Բանավոր քննությունից «անբավարար» գնահատական ստանալը ուսանողին չի զրկում տվյալ քննաշրջանում կամ մարման շրջաններում մյուս քննությունները հանձնելու իրավունքից:
